Տէր–Անտոնեանը, որի պատմութիւնը նիւթ ծառայեց բազմաթիւ բողոքների ու հեռագրների փոխանակութեան Հայաստանի և Ադրբէջանի կառավարութիւնների միջև:

Դեկտ. 18–ին Օրդուբաթի և շրջանի զինուած թուրքերը յարձակուեցին ու սկսեցին թալանել Ներքին Ագուլիսը: Ազգաբնակութիւնը թողնելով իր ամբողջ ունեցուածքը՝ փախաւ Վերին Ագուլիս: Վերջինիս ներկայացուցիչները դիմեցին Օրդուբաթ, թիւրքական հրամանատար Էդիֆ բէյին՝ խնդրելով ապահովել հայերի կեանքը: Էդիֆ բէյը անձամբ եկաւ Վ. Ագուլիս ու խոստացաւ անհրաժեշտ միջոցները ձեռք առնել Ագուլիսի պաշտպանութեան համար: Սակայն, շրջակայքում հետզհետէ սկսուեցին հաւաքուել թրքական զինուած խմբեր: Ագուլիսեցիների դիմումների վրա՝ Էդիֆ բէյը հանգստացնում ու երդւում էր անվերջ, թէ հայերի գլխից մի մազ անգամ չի վնասուի:

Դեկտ. 25–ին Վ. Ագուլիս եկան Օրդուբաթի շէյխն ու գաւառապետ Թայիրովը: Սրանց հանելուց մի ժամ յետոյ, քաղաքում լսուեց հրացանաձգութիւն և աղմուկ. թուրք զինուած խուժանը թալանում ու կոտորում էր հայերին: Վառուեց Սարգիս Հախնազարեանի տունը, և հրդեհը սկսեց տարածուել: Հայերը շէյխի առաջնորդութեամբ փոխադրուեցին թրքական թաղը: «Դիշերը, պատմում է Տէր–Անտոնեանը, հրդեհը բռնեց ամբողջ քաղաքը, և քաղաքում խրախճանք էր կատարւում: Առաւօտեան գաւառապետ Թայիրովը յայտարարեց, որ ինքը գնում է Օրդուբաթ՝ դիմաւորելու համար Խալիլ փաշային, որը, իբր թէ, մեկնում է Պարսկաստան: Եւ ասաց, որ այնտեղից կը յայտնէ, թէ՝ ո՞ւր պէտք է ուղարկել հայ գաղթականներին՝ հայկական Ցղնա գիւղը՞, թէ Պարսկաստան: Նրա գնալուց յետոյ, ժամը 12–ի մօտերը, յայտարարուեց, որ կարգադրութեան համաձայն, հայերը պիտի ուղարկուեն Ցղնա և որ նրանց ուղեկցելու է ինչ որ մի Սաթթար (Դոնկիս գիւղացի, յայտնի աւազակ, տաժանակիր աշխատանքից փախած): Ազգաբնակութիւնը երբ որ իմացաւ, սարսափահար եղաւ. դիմեց Էդիֆ բէյին, որ ինքը ուղեկցէ հայերին: Բայց Էդիֆ բէյը պահուել էր սենեակում ու խուսափում էր հայերից: Ես վազեցի ոստիկանապետ Մունչիևի մօտ (15 տարի առաջ եղել էր իմ դրագիրը), որը պահեց ինձ իր մօտ: Երբ բնակիչները մտրակներով դուրս քշուեցին, ես լսեցի հրացանաձգութիւն, ոչ թէ անկարգ, այլ համազարկերով: Համազարկերը շարունակուեցին մօտ երկու ժամ: Ո՛չ մի կասկած չկար, որ համազարկերը տրւում էին կատարելապէս կազմակերպուած զօրամասերի կողմից: Երբ համազարկերը լռեցին, իմ պահուած սենեակը բերին 30–ի չափ գեղեցիկ հայուհիներ՝ օրիորդներ ու տիկիններ: Սկսեցին սենեակ մտնել ոստիկանապետ Մունչիևը, նախկին տանուտէր Վահաբ էֆէնտին, Սաթթարը և ուրիշներ, որոնք մէկ–մէկ երկու–երկու ընտրում ու դուրս էին տանում գեղեցիկ հայուհիներին՝ նախօրօք խլելով նրանց մօտի զարդեղէններն ու դրամը: Դուրս տարած հայուհիներին բռնաբարում էին հարևան սենեակում: Նոյն սենեակում, մահճակալի տակ, պառկած էր թալանուած Սարգիս Մսրխանեանը, որի կնոջ ու երկու գաւակներին սպանել էին հէնց իր աչքի առջև: Նրա խորհուրդով, մենք դուրս եկանք յետևի դռնից — ոչ ոք չէր հսկում, ամենքը զբաղուած էին բռնաբարութիւններով — և այգիների միջով հասանք աւերակ Դանակերտ գիւղը ու այստեղից էլ Ցղնա ու Զանգեզուր, որտեղից ես եկայ Երևան: Ես ինքս տեսայ, թէ ինչպէս թալանին ու սպանութիւններին մաս-